

ԻՖ. Ի քաններորդ երկրորդ < թարկն > գրած էր.

1. Ի ժամանակ անհոգութեան քան ի նեղութեան այլ խիստ պատրաստ կացէք:
2. Յառատութեան ժամն հոգացէք մեծապէս զԱստուծոյ:
3. Ի տղայութեան ժամն համբերութիւն կալէք:
4. Յառատութեան ժամն դոհացիք մեծապէս զԱստուծոյ. զսղութիւն յիշեցէք:
5. Երբ առողջ կենայք՝ զհիւանդութիւն ի միտ ամէք:
6. Կին ի մօտեւորաց եւ ի ճանաչաւորաց առէք:
7. Ի մէկ տեսնուին ի հետ մարդոյ մի փաթթիք:
8. Չձեղ առ մարդիկը մի սուղ ունենայք:
9. Խիստ ժողովրդեան բեռն քարշ մի վիճիք:
10. Չձեր բեռնդ այլոց մի բառնայք:
11. Յանչաճ սիրելեացն ի դատ կացէք:

Թագաւոր մի կայր Քեղուրաթ անուն. ասաց. Չինչ վատ նովք կայ, ի վերայ աղէկ կնոջն լինի: — Ասաց մէկ ամիրայն. Յէ՞ր էնց կասես: — Ասաց, թէ Շունն լաւ է քան զկին. զի շուն ո՞՞ֆայ կու պահէ եւ կինն ոչ:

ՀԱՄԱՌՈՏ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՄՆԱՅՈՐԴՆԵՐԸ

8. Չձեղ ի մանկութեան բարի անուամբ հոչակեցէք (Ե. 7^o):
14. Ի չարանուն տեղուջ մի բնակիք (Չ. 4^o):
15. Ի հեղեղատ տեղի մի բացմիք (Է. 2^o):
16. Ի դողոց ուխտադրութիւնս մի ընդունիք (ԺԳ. 4^o):
20. Ի չար դրացեաց հեռաբնակ կացէք (Չ. 4^o):
21. Առնթեր կովոյ հուպ մի երթայք (Գ. 9^o):
26. Հրամանաւ կանանց չար մի գործէք:

ԻՖ. 4 եւ յառատութեան ժամն զսղութիւնն յիշեցէք B⁶¹: — յառատութիւն A: — 5 եւ յառողջութեան ժամն զհիւանդութիւն ի միտ ամէք B⁶⁰: — 6 = B³³: — 7 ի մէկ տեսնուին (ի տեսն) յամենայն մարդոյ հետ մի փաթտուիք (— թիք S) B⁵³: — 9 կամ գարուած կ'իբրեւայ A. բերքու երկու վնիտ անկամար բառերու՝ միացած. հմմտ. Ընդ մարդոյ մի վիճիք V: — 10 բեռն V: — 11 ի յանչաճ... կացիք: եւ Քրիստոս մարգարէին փառք յաւիտեանս յամէն V:

41. Եւ թագաւոր ոք, թէպէտ եւ փանաքի լինի, նուաստագոյն մի տեսանիցէք (ԺԲ. 2^o):
43. Եւ զսակաւ ձիրս թագաւորաց մեծագոյն գիտացիք:
46. Ոք որ առաւել զիտէ քան զձեզ, զնա աւելի պատուեցէք (ԺԳ. 1^o):
54. Ամենայն իրաց եւ ամենայն մարդոյ շուտ մի հաւատայք (Հմմտ. Գ. 3, ԺԶ. 1):
68. Եւ ձեզէն զձեզ ի փորձութիւն մի արկանէք (Գ. 9^o):
69. Հանապաղ այլոց ձեռք զօճն բռնեցէք:
70. Ի բարկացող արանց պատրաստ կացիք:
74. Չկերակուրս եւ զըմպելիս առանձնաբար մի ընթրիք (Ը. 6^o):
76. Ընդ բարեբախտիկ արանց մի հակառակիք (ԺԱ. 6^o):
- 78¹. Ի մէծլիւնն ի ձեր նմանոյն խէչն նստէք:
79. Ի հետ այլազգեաց յանպատեհ խօսս մի համարձակիք:
80. Ով ոք ընդ ձեզ խէթ ունի, ի նմանէ հեռագոյն կացէք:
81. Յերեսս թշնամեաց դառնութեամբ մի հայիք:
82. Յամենայն զրոյցս եւ ի բանս քաղցրաբարք եւ մեղմախօս լերուք:
83. Չօր մահուն ի միտ ամեցէք:
84. Եւ ի տանջանաց դժոխոց երկերուք:
85. Ի յամենայն բան զԱստուած յիշեցէք:
86. Անդրազ աղօթս արարէք:
87. Եւ զգոհութիւնն ի լեզւէ անպակաս արարէք:
88. Յողորմութենէ ունայն մի լինիք:
89. Աղքատաց եւ կարօտելոց օգնական լերուք:
90. Եւ ամենայն բարութեանց սիրողք եղերուք. զի աստ մարմնով ուրախ լինիջիք եւ ի հանդերձեալն հոգւով ցնծասջիք: ...

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ



¹ Թ. 78—90 համաձայն Bի. չունի S: Իբրև վերջին խրատ ունի S. Եւ յամենայն ժամ զհանդերձեալն ի միտ ամէք. Կը պակսի Bին:

ԲԵԼԳԻՆ ԵՒ ՀՆՅԵՐԸ

Ը. ԳԼՈՒԽ

Անվերսի Մայր Եկեղեցին: Թումաս արքեպիսկոպոս Նուրիչանեանի մահն եւ քաղումն այնտեղ: Նրա քողած իրերը: Թումասի կաթողիկոսական կոնդակներն եւ բազմաթիւ լատիներէն յանձնարագիրները: Թումասի ծրագրած «Խայ-լատիկական» դպրոցը: Նրա մահուան վկայագիրը:

Հրաչագործ Մակարից յետոյ (Բ. Գլուխ)¹ Բելլիան հանդատաւայր է դարձել մի երկրորդ հայ եպիսկոպոսի, որ նոյնպէս նշանաւոր է հանդիսացած, թէեւ տարբեր տեսակէտից: Բելլիայի հանրահոչակ նաւահանգիստ Անվերս (կամ Անուվերս) քաղաքի՝ յանուն Աստուածամօր Մայր Եկեղեցին (Eglise Cathédrale de Notre Dame) այն հրաչակերտ շէնքերից մէկն է, որ երբ եւ իցէ մարդկային հանձարը կառուցել է ի փառս Արարչին: Նրա մեծութիւնը, ճարտարապետական շքեղութիւնը, եւ առանձնապէս նրա հակայական աշտարակը պատուաւոր տեղ են յատկացնում այս եկեղեցուն՝ արուեստի հրաշալիքների փոքրաթիւ շարքում: Ահա այս փառաւոր տաճարում, այն էլ աւագ խորանի առջեւ, դասի մէջ, թաղուած է Վանանդեցի Թումաս արքեպիսկոպոս Նուրիչանեան: Ո՞վ էր սա եւ ինչո՞վ է նշանաւոր:

Հայ ժողովրդի քաղաքական եւ տնտեսական հանդամանքներն այնպէս են դասաւորուել, որ քաղաքակրթական քայլերն եւ ձեռնարկութիւնները մարմնացել եւ իրականացել են նրա հայրենիքից դուրս եւ ապա ներս մուծուել: Այսպէս է եղած յատկապէս տպագրութեան համար: Հայ տպագիրն առաջին անգամ լոյս աշխարհ է տեսել այնտեղ, ուր միջոցներ կային այս նոր արհեստից օգտուելու: Ինչպէս որ առաջին կարեւոր գաղթականութիւնը Եւրոպայում՝ հիմնուել է Վենետիկում, այդպէս էլ առաջին հայ գիրքը երեւան է եկել գոթերի այդ հագուազիւտ քաղաքում: Տպագրութեան գիւտից (1455) հազիւ 57 տարի վերջն էր, որ Վենետիկում երեւաց նրա հայերէն օրինակը, 1512—1513ին: Այնուհետեւ հայ տպագրի սկսում է տարօրինակ կերպով բուսնիլ Եւրոպայի այլեւայլ եւ միմիանցից հետու վայրերում. Կ. Պոլսում (1567), Հոմում (1579 եւ 1584), Լէմբեր-

գում (1616), Միլանում (1624), Պարիսում (1633), եւ Լիվոնոյում (1643): Չեռներէց մի հայ վաճառական էլ մի սերմ բերել, ցանկ է իր հայրենի Նոր Ջուղայում, 1640ին: Բայց այս բոյսերն ոչ մի տեղ հաստատուն արմատ չեն բռնել եւ չեն ծլել, ծաղկել: Բոլոր այդ տպագիրները խեղճ եւ անճաշակ գործեր են եղել:

Հայ տպագրութեան առաջին մաքուր, լուկապէս գեղարուեստական արտադրութիւնը լոյս է տեսած Ամստերդամում 1660ին, շնորհիւ էջմիածնայ Յակոբ Գ. կաթողիկոսին: Հոլլանդացի պատմագիրներն էլ խոստովանում են այդ երբ գրում են՝ «Հայաստանի պատրիարքը Յակոբ, արուեստի եւ գիտութեանց սիրահար մի մարդ, 1656ին լսելով, որ Վենետիկի եւ Նոր Ջուղայի տպարանների տառերը մաշուել, անգործածելի են դարձել, իր սարկաւազ Մատթէոս Ծարեցին Հոլլանդա է ուղարկել, որպէս զի նոր, լաւագոյն տառեր պատրաստել տայ»¹: Այս Մատթէոս Ծարեցին էլ իր առաջին տպած գիրքը (1660), Շնորհալու «Յիսուս Որդին», անշուշտ իր պետից ստացած հրահանգի համաձայն, մեծ փափկանկատութեամբ նուիրել է Հոլլանդայի իշխանին՝ «Նորընձա փոխնչիֆային Վիլհելմ Օրանեայ»: Մատթէոսի մահից (1661) յետոյ Յակոբ կաթողիկոս Ամստերդամ է ուղարկում Ոսկան վարդապետին, որ յաջող կերպով շարունակում է առաջինի գործն, եւ 1666ին երեւան է հանում առաջին հայ մաքուր եւ պատկերազարդ տպագիրը, Աստուածաշունչը: Ոսկան Ամստերդամում 15 գիրք տպելուց յետոյ ստիպուել է իր գործունէութիւնը տեղափոխել նախ Լիվոնոս եւ ապա Մարսիլիա, ուր եւ վախճանուել է 1674ին: Յակոբ կաթողիկոս՝ այս անգամ իր ձեռնասուն Թումաս Վանանդեցի վարդապետին է յանձնում տպարանական գործը: Թումաս այդ ժամանակ Գողթն գաւառի Ս. Խաչ վանքի նորոգութեան համար ժողովարարութիւն էր անում Հայաստանի այլ եւ այլ կողմերում. բայց կաթողիկոսի յանձնարարութեամբ անցնում է Եւրոպա եւ նախ զալիս է Հոմ, ուր բերել է տալիս իր 3 մերձաւոր աղագիւմններին, իր մօրեղբորորդի Մատթէոս Յովհաննիսեանին եւ իր եղբորորդի Գուկաս եւ Միքայել Նուրիչանեաններին: Սրանցից Մատթէոս Յով-

¹ Մարտիան, Հոլլանդա եւ Հայերը, Վիեննա 1926, Աղբայրն Մատենադարան, Թ. ՃԳԳ., էջ 64—71:

հաննիսեան ամբողջապէս նուիրուած է տպագրական գործին եւ 1685ին վերականգնուած է հայկական տպարանը Ամստէրդամում. բայց գործը կաղում է մինչեւ որ Թոմաս, որ արդէն եպիսկոպոս էր, իր եղբորորդոց հետ գալիս է Ամստէրդամ, տպարանը վերակազմուած է, ճորտացնուած է նոր գործիքներով եւ տաւերով եւ 1695էն մինչեւ 1705 հրատարակուած է հայերէն մի գեղեցիկ աշխարհացոյց քարտէս եւ 13 դիրք, որոնք հիմայ էլ կարող են տպագրական արուեստի զարդ համարուիլ:

Թոմաս Վանանդեցի, 1705ին, Ամստէրդամի քաղաքային նստարի ներկայութեանը կտակ է անուած, որով «իր տպարանը բոլոր առարկաներով եւ բոլոր տպած գրքերը՝ թողնուած է իր սիրեցեալ հայրենիքին, որպէս զի այն խեղճ քրիստոնեաներն, որոնք ապրում են խաւարի մէջ եւ բռնաւորի լուծի տակ, լուսաւորուին»:

Մինչեւ հիմայ յայտնի չէր թէ իր տպագրական գործունէութիւնը դադարեցնելուց յետոյ Թոմաս ո՛ւր է գնացել եւ ի՛նչ վախճան է ունեցել: Այժմ շնորհիւ մի բարեպատեհ հանգամանքի որոշ կերպով գիտենք այդ²:

1708 Յուլիս 13ին Անվէրս է գալիս ծեր եւ հիւանդ մի հայ արքեպիսկոպոս, որ դիմում է տեղւոյն եպիսկոպոսարանին: Մայր Եկեղեցւոյ վերատեսուէ հայր Nicolas Ferlatia ընդունում է թէ՛ նրան, եւ թէ՛ նրան հետեւող 2 հայ փոքրաւորներին եւ տեղաւորում է եպիսկոպոսարանում: Մայր Եկեղեցին հոգում է նրանց բոլոր ծախքը: Հարկ եղած բժշկական դարմանները մատուցանում են հիւանդին, բայց իր յառաջացած տարիքի

պատճառով հիւանդութիւնն ընկճում է նրան եւ հայ արքեպիսկոպոսը աւանդում է իր հոգին, «Հոռոմէական կաթողիկէ եկեղեցու Ս. Պորհուրդներն ընդունելով», ինչպէս ասուած է նրա մահուան վկայականում: Եպիսկոպոսի տեղապահն եւ միւս Բելգիացի կանոնիկոսները հանդիսաւոր թաղում են կատարում եւ հայ արքեպիսկոպոսի մարմինը զետեղում են Մայր Եկեղեցւոյ աւագ խորանի առջեւ, դասում, այնտեղ, ուր նրանից շատ յառաջ, այն է 1590ին, մի ուրիշ եպիսկոպոս է եղել թաղուած, որի տապանագիրն է՝

D. O. M. Monumentum Huguini Hiberni Archiepiscopi Thuamensis, obiit nonis Augusti M. D. X. C.

Ահա այս տապանում է հանդչում այժմ, կապտադոյն տապանաքարի տակ, մեր ծառայող Թոմաս վարդապետ Վանանդեցի Նուրիշանեան, Գողթան գաւառի Ս. Պաշի վանահայր, արքեպիսկոպոս եւ Հայ Տպագրութեան մեծ գործիչը:

Տխուր յուղարկաւորութիւնից յետոյ եպիսկոպոսարանի քարտուղարը հայր Հայբէնս (Hybens) կանչում է քաղաքային նստարին եւ խնդրում է որ ըստ օրինի ցուցակագրէ հանդուցեալի իրեղէնները: Նստարը՝ Jacques Boeye՝ Մայր Եկեղեցու արարողապետ հայր Վան դէր Ստեգէն (Stegen) կանոնիկոսի հետ միասին մի առ մի ցուցակագրել է բոլոր իրերը: Ներկայ են եղել եւ մասնակցել են Թոմասի հետ եկած երկու հայերն, որոնց անուններն են Յովհաննէս Գասպար (Johannes Gaspars) եւ Պետրոս Ալվարէզ (Petrus Alvarez): Յուցակը կազմուած է Փլաման լեզուով, որ Անվէրսի պաշտօնական լեզուն է: Ահա ինչպէս է նկարագրում Յուցակն՝ այս իրերը.

1. Մի կաշիով պատած սնտուկ, որի մէջ կային նոր տպուած գրքեր, մէկ մասը կազմուած, միւսն անկազմ, «հայերէն լեզուով եւ գրերով»:
2. Մի ուրիշ սնտուկ, դարձեալ հայերէն գրքերով. նաեւ երկու սեւ անդրալարտիք:
3. Դարձեալ մի սնտուկ հայերէն դանազան գրքեր:
4. Մի սնտուկ ճերմակեղէն եւ մէջը հայերէն լեզուով մի Պատարագամատոյց:
5. Մի կաշիէ պայուսակ, այլ եւ այլ հագուստեղէնով: Յովհ. Գասպար յայտնեց թէ այդ պայուսակն իրենն է:
6. Կտակէ պարկ, հագուստեղէնով: Պետրոս Ալվարէզ յայտնեց թէ այս պարկն իրենն է:

7. Մի փակ կողով, հին բարձեր եւ կաւեղէն, անարժէք:

«Թոմաս եպիսկոպոս, շարունակում է նստարը, եկել է Անվէրս, որպէս զի այստեղից նաւով վերադառնայ իր հայրենիքը, Պարսկաստան»:

Այնուհետեւ նստարը յիշում է հանդուցեալի թողած թղթերն, որ ես յառաջ պիտի բերեմ մանրամասնօրէն, նրանց թուականի կարգով: Թղթերից երեքը հայերէն են, մնացածները լատիներէն: Նստարն եւ Եկեղեցու կանոնիկոսները հայերէն չգիտենալով, հաւատացել են հայ հետեւորդների տուած բացատրութեան, այս պատճառով նրանց բովանդակութիւնը Յուցակում սխալ է արձանագրուած: Հայերէն ձեռագիրների պատճէններն են միայն մնացել, անշուշտ հայ կիսադրագէտ սպասաւորի ձեռքով ընդօրինակուած, այդ պատճառով ուղղագրական վրէպակներով լի:

Ահա այդ հայերէն թղթերը.

1. «Յիսուսի Գրիստոսի ծառայ Յակոբ կաթողիկոս ամենայն Հայոց եւ պատրիարք Վաղարշապատու քրիստոսահիմն եւ լուսակառոյց Աթոռոյ էջմիածնի» իր օրհնութիւնն է շնորհում «ընդհանուր ամենայն հայկական ցեղի պատուածատէր եւ բարեպաշտ հանճարաշահ վաճառականաց, եկաց եւ բնակաց, մեծաց եւ փոքունց, առ հասարակ ամենեցունց» եւ յայտնում է թէ «յերկրին Գողթնեաց վանք մի կայր սուրբ Պաշ անուն, որոյ եկեղեցիքն եւ ամենայն շինութիւնք ի վաղուց յետէ աւերալ եւ խանդարեալ կայր, եւ եղեալ անբնակ ի քահանայից եւ եկեղեցական միաբանից եւ բնաւին ի քրիստոնէից, որոց փոխանակ այլազգիք տիրէին, եւ յահէ այլազգեաց ոչ ոք չկարէր ի քրիստոնէից մօտաւորել կամ մերձենալ անդ, բայց հոգեւոր որդին մեր Թոմաս վարդապետ ձեռնարկեալ մեծաւ ջանիւք եւ աշխատութեամբ եւ բազում ծախիւք նորոգեալ պայծառացոյց զեկեղեցին եւ զվանքն. իսկ այժմ անկեալ կայ ի ներքոյ բազում պարտուց վան շինութեան կողմանէ, որոյ վանն տուաք զայս նամակս, օրհնութեամբ, չըջել ի դրունս քրիստոսասէր վաճառականացդ եւ պարոն զով վաթաւորացդ խնդրել ողորմութիւն վանն սիրոյն Գրիստոսի եւ յուսոյ արքայութեան ամենայն ոք, ըստ իւրաքանչիւր կարեաց, գմբիւհանս յորդորելով եւ միմիանց բարեաց պատճառ լինելով յօժարամիտ կամօք եւ յայտարար սրտով ողորմութիւն արարէք...»:

«Գրեցաւ ի թուին ՌձԺ, Մարտի ամսոյ ԻԼ. յաւուր հինգշաբթի եւ ի դրան սրբոյ էջմիածնի»:

Ըստ այսմ կոնդակը գրուած է 1661 Մարտ 28ին, ժողովարարութեան նպատակով ի նպաստ Ս. Խաչ վանքի: Իսկ նստարը նրա բովանդակութիւնը Փլամաներէն արձանագրել է այսպէս. «վկայական Հայոց Յակոբ պատրիարքի՝ տրուած Թոմաս վարդապետի եպիսկոպոսական օժման մասին, 28 Մարտ 1660ին»:

2. Երկրորդ թուղթն եւս նոյն Յակոբ կաթողիկոսից է եւ սկսում է այսպէս. «Յիսուսի Գրիստոսի ծառայ Յակոբ կաթողիկոս եկեղեցւոյ ընդհանուր հայկական տոհմի վիճակեալ սրբոց առաքելոցն Բարթողիմէոսի եւ Թադէոսի, տեղապահ եւ յաջորդ սրբոյն Գրիգոր հօրն մերոյ Լուսաւորչին, եւ պատրիարք Վաղարշապատու...»: Կաթողիկոսը այս կոնդակը տալիս է նոյնպէս Թոմաս վարդապետին որ երթայ Սալմաստի եւ Պոյի կողմերն եւ ժողովարարութիւն անէ նոյն Ս. Պաշ վանքի համար, որ «հացի կողմանէ կարի պակասութիւն ունի» եւ յորդորում է տալ «անարտունջ երեսօք եւ պայծառազոյն դիմօք»:

«Գրեցաւ ՌձԺԱ. Հոկտեմբեր քսանհինգ» = 1672:

3. Երրորդ հայերէն թուղթն էլ նոյն Յակոբ կաթողիկոսի կողմից տրուած, ուղղուած է «Վանի թեմի եւ վիճակի առաջնորդաց, որդւոց մեր սիրելեաց եւ համօրէն քահանայից, նաեւ ժողովրդեան» դարձեալ Ս. Պաշի համար եւ յորդորում է, որ օգնեն Թոմաս վարդապետին, «սիրով եւ յօժարութեամբ, ցորենով եւ այլ ինչ նիւթով եւ ողորմութեամբ»:

«Գրեցաւ թուղթս ՌձԺԲ. Յունիս ամսոյս Ժ. ի ի յանապատս մեծ Ստաթէի» = 1673:

Նստարն այս երկու կոնդակների հայերէն պատճէնների տակ էլ գրում է, թէ այս թղթերն «անցագիրներ» են Հայոց Յակոբ կաթողիկոսի կողմից Թոմաս վարդապետին տրուած»:

Իսկ լատիներէնները բնականաբար ճշդութեամբ են արձանագրուած: Այս թղթերի բովանդակութիւնն է՝

4. Հում, 1682 Յուլիս 9. «Հայոց եւ Հնդկաց պաշտպան» (Armenorum Indorumque Protector) կարդինալ Cybo, Չերմօրէն յանձնարարում է «հայ ուխտաւոր, Հայաստանի Ս. Պաշ վանքի վանահայր Թոմաս

² Աւելորդ չեմ համարում պատմել այս հանգամանքը: Անվէրսի պետական գրասենյակի կառավարիչ՝ Վաննէրս (J. Vannerus, այժմ աղաքեմական), իր հակողութեանը յանձնուած հին յիշատակարանները կարգի բերելու ժամանակ, պատահում է մի կապոցի, որտեղ իրեն անձանօթ լեզուով գրուած թղթեր են եղել եւ լատիներէն ձեռագիրներ, որոնցից մէկն առանձնապէս զբաւել է նրա ուշադրութիւնը: Այս ձեռագրի մէջ ասուած էր թէ ոմն հայ արքեպիսկոպոս 1695ին Ամստէրդամում տպարան է ունեցել եւ բազմաթիւ հայերէն լեզուով գրքեր եւ քարտէսներ է տպել: Այս «ճորտութիւնը» նրան այնչափ գարմացրել է, որ մի յօդուած է գետեղել այդ մասին Բրիւքէլի Revue des Bibliothèques et Archives de Belgique հանդէսի մէջ (1906), Note sur une Imprimerie Arménienne à Amsterdam վերնագրով: Պատահամբ ծանօթանալով այդ յօդուածին եւ անմիջապէս տեսնուեցայ Պ. Վաննէրսի հետ, որ հաճեցաւ մի օրինակ նուիրել ինձ այդ յօդուածից եւ միեւնոյն ժամանակ միջամտել, որ վերոյիշեալ կապոցը Անվէրսից Բրիւքէլ բերուելով գրուի իմ արած գրութեան տակ: Այս կերպով ես հնարաւորութիւն ունեցայ քննել մանրամասն նրա բովանդակութիւնը: Օգտուած եմ այս առթից խորին շնորհակալութիւնս յայտնելու համար յարգելի Պ. Վաննէրսին:

Եպիսկոպոսին» եւ խնդրում է, որ նրան ամէն տեղ սիրով ընդունին եւ նրա ֆանապարհների ապահովութեանը հոգ տանին: Ստորագրուած է A. Cardinalis Cybo, Protector եւ գրուած է նրա պաշտօնական կնիքը:

5. Դրանից մի քանի տարի վերջը Թոմասին գտնում ենք Բրիւֆելլում, ուր ներկայանում է պապական նուիրակին, եւ սա 1693 Հոկտեմբեր 27 թուով մի Յանձնարարական է տալիս, որի մէջ նուիրակը գրում է թէ Հոսմից 21 Հոկտեմբեր 1681 թուով ստացած պաշտօնագիրը վկայում է թէ Rd. Sr. Thomas Vardapiet Devanant (Վանանդեցի) իրօք «Հայաստանի Ս. Խաչ վանքի եպիսկոպոս» է: Եւ որովհետեւ, ասում է նուիրակը, նա այսչափ հեռաւոր երկրից է եկել, ուստի այն բոլոր անձերն, որոնք նրան սիրալիր ընդունելու թիւն ցոյց կու տան, արժանի կը լինին համբաւաւոր արեւելեան եկեղեցիներին (prosequantur de famoso nomine ecclesiarum orientalium egregie meritori): Ստոր. J. Piazza նուիրակն եւ M. Pigliarch, քարտուղար: Դրուած է նուիրակի պաշտօնական կնիքը:

Շնորհիւ այս յանձնարարականի նա ազատ կերպով շրջում է ամբողջ Բելգիայում եւ բոլոր տեղական եպիսկոպոսներից արտօնութիւն ստանում իրենց եկեղեցիներում իր մայրենի հայերէն լեզուով պատարագելու (in genuina sua lingua, in lingua armenica): Նրա թղթերի մէջ կան այսպիսի վկայականներ՝ Մալինի արքեպիսկոպոսից 28 Հոկտ. 1693, Անվէրսի եպիսկոպոսից 14 Նոյեմբեր 1693 թուով. իսկ երկու տարի վերջը, Հիլդէս-հէյմի եպիսկոպոսից 1695 Յունիս 5 թուով եւ նոյն տարին նաեւ Գանի (Gand) եպիսկոպոսից:

Ինչպէս զիտենք նա այդ տարին 1695ին եկել է Ամստէրդամ եւ այնտեղ հիմնարկել իր տպարանը: Բայց երկար չէ մնացել: Քանի որ իր ազգականները յաջող կերպով վարում էին տպարանական գործը, ինքը հարկ է համարել անցնել Վիեննա: Այստեղ մեր ճարտիկ Վանանդեցին ամբողջ կէս տարի է մնում եւ յաջողում է 2 կարեւոր յանձնարարական ձեռք բերել:

6. Վիեննայի արքեպիսկոպոսը 1697 Օգոստ. 14 թուով գրութեամբը վկայում է, որ «Գերապատիւ Տէր Վարդապետ վանանդ (Rever. Sr. Vardapiet Wanand), Ս. Խաչ վանքի արքայ եւ Մեծ Հայքում Գողթան արքեպիսկոպոս», մօտ կէս տարի մնացել է

Վիեննայում եւ եկեղեցական պաշտօն վարել, մեծ արժանապատուութեամբ, առանց որ եւ է առիթ տալու «ոչ բանադրանքի, ոչ կախակայման եւ ոչ որ եւ է քննութեան»: Ստոր. արքեպիսկ. Joes Bapta Mair եւ եպիսկ. նօտար Melchior Scheibelavs: Դրուած է պաշտօնական կնիքը:

7. Թոմաս Վիեննայում ստանում է ջերմ յանձնարարական նոյն ինքն Աւստրիոյ կայսր Լէոպոլդից, 1697 Սեպտ. 5 թուով, մագաղաթի վրայ գրուած եւ կայսերական կնիքով, որտեղ կայսրը գովում է հայ եպիսկոպոսի բրիտանիական եռանդը:

Անցնում է դարձեալ 2 տարի: Թոմաս 1699ին նորից Բելգիայումն է եւ Անվէրսում տեսնում է Բոլլանդեանների հետ: Նրա այս տեսակցութիւնը պատմուած է Acta Sanctogumում, ինչպէս պիտի տեսնենք յետագայ Գլխում: Այդ տարին նա հարկ է համարել նոր յանձնարարական ստանալ Բելգիայում:

8. Այս նոր գրութեան մէջ, որ կրում է 1699 Յունիս 7 թուականն եւ ստորագրուած է Մալինի արքեպիսկոպոս Humbert Guillaume de Precipiano, մանրամասն յիշուած են մեր Վանանդեցու բոլոր տիրոջները լատիներէն այսպէս՝ Rever. Dom. Thomas Vardapiet Natione Armenum, ordinis St. Antonii abbatis, Dei gratie et matris ecclesie archiepiscopum Goghtanensum, monasterii S^{ae} Crucis, in Major Armenia, hygamenum sive prepositum abbatem, որ Հոսմայ Եկեղեցու Ս. Աթոռի հետ հաղորդութեան մէջ է: Բելգիացի primat արքեպիսկոպոսը ջերմազին յանձնարարում է, որ ամէն ոք նպաստէ «այս անձնուէր եկեղեցականին, որ թշնամիների տիրապետութեան տակ գտնուած մի երկրում բնակելով եւ կեանքի բազմաթիւ վտանգների ենթարկուելով հանդերձ պահպանել է իր կրօնն ու բարեպաշտութիւնը»:

Թոմաս Բելգիայից դառնում է Ամստէրդամ, տպարանական գործի վրայ հսկելու համար: Բայց 2 տարի վերջը դարձեալ ուղևորութեան է սկսում, այս անգամ դէպի Գաղղիա:

9. Նրա թղթերի մէջ գտնում ենք մի ջերմ յանձնարարական 1702 Մարտ 3 թուով, Պարիսում, Բենեդիկտեան կրօնաւորական կարգի ընդհանուր մեծաւորից տրուած (humilis superior generalis congregationis ordinis sanctae benedictae): Ստոր. Claudius Boistard:

10. Պարիսից նա դարձել է Ամստէրդամ,

ուր 1705ին կատարել է իր նշանաւոր կտակը 1705 Հոկտ. 30 թուով որի լատիներէն բնագրի մի օրինակը կայ նրա թուղթերում: Այս կարեւոր վաւերագրի ամբողջ քարգմանութիւնն էս արդէն ուրիշ տեղ³ զետեղած լինելով, աւելորդ եմ համարում այստեղ կրկնել: Ինչպէս վերեւ յիշեցի, այս թուղթն է, որ ամէնից աւելի դրաւել է օտարի ուշագրութիւնը:

Հետաքրքրական է որ Թոմաս չէ բաւականացել այսպէս Բելգիա, Աւստրիա, Գերմանիա, Գաղղիա եւ Իտալիա ճանապարհորդելով. նա գնացել է նաեւ Անգլիա: Այս երեւում է նրանից, որ նրա թղթերում եղել է՝

11. 1707 Յունիս 8 թուով անգլիական անցագիր, մագաղաթի վրայ, լատիներէն լեզուով գրուած, Անգլիոյ Աննա թագուհու անուամբ տրուած եւ այս վերջինի արքայական կնիքովը կնքուած:

Այս վերջին ճանապարհորդութիւնից յետոյ է, որ նա որոշել է դառնալ իր հայրենիքը եւ ինչպէս վերեւ տեսանք, 2 հայ հետեւորդներով եկել է Անվէրս, որպէս զի այնտեղ նաև նստի հաւանականաբար Ձմիւռնիայի համար. իսկ այնտեղից դիւրին էր ցամաքային ճանապարհով Գողթն դաւառ կամ իր Ս. Խաչի վանքը երթալ: Բայց բախտը տարբեր կերպով էր տնօրինել...:

Ինչ էր նրա արդեօք այս բոլոր մեծ ճանապարհորդութիւնների եւ ուսուցչապետներից⁴, եպիսկոպոսներից, կարգիւնաններից եւ նոյն իսկ կայսրից առած այլեւայլ յանձնարարականների նպատակը:

Թոմասի թղթերի մէջ գտնուած մի տպեալ, լատիներէն ուղերձ՝ բացատրում է այդ նպատակը:

Այս գրուածքը, առանց թուականի է եւ ուղղուած է՝ «աշխարհական եւ եկեղեցական իշխաններին, դուքսերին, մարքիզներին, կոմսերին, բարոններին, եւ առ հասարակ ամէն վիճակի եւ դասակարգի անձերին»:

«Իմ պատանեկութիւնից սկսած, ասում է այնտեղ Թոմաս Վանանդեցին, ես միտք եմ ունեցած իմ թեմում մի լատինախոյակաւ դպրոց հիմնել (ab adolescentia meâ hanc

³ Մարտիան, Հոլլանդա եւ Հայերը: Վիեննա, Միտթ. Տպար., 1926, էջ 106—120:

⁴ Հոլլանդական նօտարը վկայում է, որ Թոմաս յանձնարարական է ունեցել, իբրեւ իր «բրիտանիական եռանդին ապացոյց» նաեւ Գերմանիայի Hall քաղաքի (Մագդէլէնուրգի մօտ) Augustus Hermanns Frantius ուսուցչապետից:

usque in gravesentem aetatem in meâ Diocesi Collegium utriusque Litteraturae Latino-Armeno idioma stabilendi animus mihi fuit semper...): Այս նպատակով Պարսկահայաստանից Եւրոպա բերել տուի իմ ազգական երեք պատանի, որպէս զի նրանցից երկուսը ընտիր ուսումով եւ բարքով կրթուին, իսկ միւսը տղաբարական արուեստին հմտանայ: Տպարանը անհրաժեշտ էր իմ ծրագրած դպրոցին գրեանք հասցընելու համար...: Այս երիտասարդներն եկան եւ լիովին իրականացրին իմ սպասածը: Այժմ մնում է, որ նրանք էլ հնարաւորութիւն ունենան կրթել մեր այն թշուառ քրիստոնեաներին, որոնք գտնուած են խաւարի մէջ եւ սպրում են բռնաւորական լուծի տակ: Այս նպատակի համար պէտք է որ իմ հայրենիքում այդպիսի մի դպրոց բացուի եւ տպարանս էլ այնտեղ փոխադրուի...»:

Գործի էութիւնն այսպէս բացատրելուց յետոյ Թոմաս խնդրում է բարեպէր եւ բարեպաշտ Եւրոպայի ընթերցողներից, որ ջնայեն իրենց օժանդակութիւնը եւ նրանց ջերմեանդութիւնը շարժելու համար պատշաճաւոր խօսքեր է յառաջ բերում Աւետարանից, Գործք Առաքելոցից եւ Սաղմոսից: Աւետարանից յառաջ բերած խօսքն է՝ sine me nihil potestis facere «Առանց իմ ոչինչ կարէք առնել» (Յովհ. ԺԵ. 5):

Ինչ է եղած այս շրջաբերական ուղերձի արդիւնքը՝ յայտնի չէ: Նօտարական արձանագրութեան համաձայն, նրա մահուանից յետոյ որ եւ է գումար չէ գտնուած իր քով: Այսչափ միայն յիշուած է այնտեղ թէ իր հայ հետեւորդները «Գասպար եւ Արվարէզ յայտնեցին թէ հանգուցեալն ընդ ամէնը 5 դուկատ (ducats) ունէր, որ ծախուել է նաւալարձի, բժշկի եւ դեղերի համար»: Այնպէս որ, նոյն իսկ նօտարական ծախքն Անվէրսի եկեղեցին է վճարել, ինչպէս վկայում է նօտարի ընկալագիրն, որտեղ ասուած է թէ «Հայաստանի հանգուցեալ արքեպիսկոպոսի իրերը ցուցակագրելու համար գործածուել է 26 թերթ թուղթ եւ ծախքը 14 st. (տեղական դրամ) է»:

Թոմասի այս անակնկալ վախճանից յետոյ նրա հետեւորդները խնդրել են, որ իրենց մի վկայական տրուի այս տիրուր եղելութեան մասին, որպէս զի նրանք անարգել շարունակ են իրենց ճանապարհը: Ըստ այնմ Անվէրսի Մայր Եկեղեցու եպիսկոպոսական Տեղապահից 22 Սեպտեմբեր 1708 թուականով այդպիսի մի վկայական ստանալով Յովհ. Գաս-

պար եւ Պետրոս Արվարէզ մեկնել են իրենց երկիրն եւ իրենց հետ անշուշտ տարել Թոմասի բոլոր իրեղէններն, որովհետեւ զրանց հետքը չէ մնացել Անվէրսում :

Շատ հետաքրքրական վաւերագիր է այդ վկայականը, որտեղ պատմուած է ամբողջ եղեղութիւնն եւ միանգամայն բարի վկայութիւն է տրուած հայ սպասաւորների մասին : Այդ թղթի մի օրինակը կցուած է Յուզակին եւ գտնուած է կապոցում :

(Շարունակելի :)

ՍԱՐՈՒՆԱՆ



ԺԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ՕՏԱՄԳՈՒՆՑ ԳՆՏՄՈՒԹԵԱՆ

ԵՐԵՄԻԱ ՉԷԼԷԳԻԻ ՔԵՕՄԻՐՃԵԱՆ

ԵՐԿՈՒ ԽՕՍԻ

Քառորդ Դար մը եւ աւելի ժամանակ անցած է, երբ առաջին անգամ 1909ին սկսայ «Հանդէս Ամսօրեայ»-ի մէջ հրատարակել Երեմիա Չէլէպի Գէօմիւրնեանի «Ստամբուլում Պատմութիւն»-ը եւ գաղափարն ունեցայ՝ անոր մասին պատրաստել Ծանօթագրութիւններու շարք մը, որոնք վերջ կը գտնեն ահա այսօր, թէեւ՝ բնա՛ւ եւ բնա՛ չէի կարծեր, թէ առաջադրած ծրագրէս աւելի ընդարձակութիւն ունենային անոնք՝ երեք հատոր կազմելու աստիճան :

1933ին աշխատութեանս երկրորդ մասը լրացնելէս յետոյ, որոշած էի ա՛յլ եւս չգրադիլ Վոսփորի Ասիական եգիպտացի Ծանօթագրութիւններովը, զի ժամանակս չէր ներեր, եւ այդ մասին հաւաքած տեղեկութիւններուս ծրարիկը չունէի բովս. սակայն՝ նոյն տարին անդրանիկ գաւկիս յեղակարծ մահուան ինձ պատճառած դառնակակիծ ցաւը, չգիտեմ ի՞նչ պէս, սրտիս մէջ արծարծեց յաճկարծ, պարտականութեան մէջ չթերանալու ջերմ իզգը եւ ստիպեց զիս խոնարհիլ սուգիս առաջ ու աշխատիլ. ուստի Կ. Պոլիս թողած հաւաքածոյներս, շնորհիւ անգուգական Եղբօրս՝ Գէորգ Թորգոմեանի ջանքերուն հասան ձեռքս եւ ես անմիջապէս լծուեցայ գործի :

* * *

«Ստամբուլում Պատմութիւն»-ին հետ՝ Ծանօթագրութիւններուս առաջին մասը երբ 1913ին առանձին Հատորով վիճեցաւ հրատարակելու, ողջ էր տակաւին Մօրեղբայրս՝ Նշան Ղուկասեան, որ կը սիրէր կարդալ գայն եւ խորհուրդ կու տար ինձ՝ շարունակել միւս մասերը. ո՞վ կրնար գուշակել այն ատեն՝ թէ 20 տարի յետոյ այդ Ծանօթագրութիւններուս Բ. Հատորը իւր յիշատակին նուիրել նշանակուած է եղեր ինձ. եւ ո՞վ կրնար նաեւ երեւակայել, թէ այս Գ. Հատորս ալ՝ աւա՛ղ, ինձ նակատագրուած է եղեր ձօնել անմոռաց յիշատակին իմ սիրասուն, անգին գաւկիս՝ «Արամիս», բարձր կրթութեամբ դաստիարակուած ու լաւագոյն ձիրքերով օժտուած այդ կայտառ, առողջ, ուսումնական գաւկիս, որ փառքս էր, պարծանքս եւ յոյսս, եւ որ իւր 42րդ գարունին մէջ ասուպի մը պէս կ'իյնար, կը մարեր...

Ո՛հ, ո՞րչափ անիմանալի է ու խորհրդաւոր «կեանք» կոչուածը, ո՞րչափ յղի է այն՝ անակնկալ պատահարներով ու դէպքերով...

* * *

Ինչպէս ընթերցողներս կը տեսնեն, այս Հատորը՝ համաձայն Երեմիա Չէլէպիի շրջագայութեան, կը պարունակէ Վոսփորի Ասիական եգիպտացի մէկ ծայրէն միւսը, նամբու վրայ գտնուած Հայ-ագգային յիշատակները, բոլորն ալ՝ գրեթէ մոռցուած, քաղուած, չըսեմ կորած :

Ասոնց ամփոփումը ըրած պահուս, ամենամեծ պակասութիւնը գործած կ'ըլլամ, եթէ իմ երախտագիտական անհուն շնորհակալութիւններս չփութամ հրապարակաւ յայտնել Ս. Երուսաղէմի արժանընտիր, Լուսարարպետ եւ ներհուն բանասէր, Գերապատիւ Տէր Մեսրոպ Եպիսկոպոս Նշանեանի, որ, ինչպէս երբեմն, այս անգամ ալ հանեցաւ Ս. Յակովբեանց վանքին մէջ պահուած Երեմիա Չէլէպիի ինքնագիր Օրագրութեան նորանոր տեղեկութիւններ հաղորդել ինձ, տրամադրելով նաեւ անոր երկու անտիպ ձեռագիր նամակները՝ տողած իր վաղամեռիկ որդւոյն՝ Գրիգոր վարդապետի մահուանը վրայ, նամակներ, գորս կը ներկայացնեմ քիչ անդին, եւ որոնցմով՝ Մեսրոպ Սրբազան գերագին գագումն ունեցած էր, որդեկորոյս Երեմիայի խօսքերովը՝ որդեկորոյս բժշկիս սրտի կսկիծը եւ մորմոքը պահ մը մեղմել...

Նշանեան Մեսրոպ Սրբազանին հետ պար-

տաւոր եմ չմոռանալ երբեք իմ Գերայարգելի բարեկամս, բազմահմուտ եւ բազմավաստակ բանասէր Հ. Ներսէս Ա. Ակինեանը, ու երախտապարտ գագումներս արտայայտել հաս իրեն, որ՝ ո՛չ միայն մեծ հոգածութիւն ու գոհողութիւն ունեցաւ գործիս տպագրութեանը համար, այլ եւ՝ նորագոյն տեղեկութիւններով պատրաստեց Երեմիա Չէլէպի Գէօմիւրնեանի լիակատար մէկ կենսագրութիւնը, անոր առաջին էջերուն վրայ դրոշմելով ողբացեալ հոգեհատոր գաւկիս լուսանկարն ու անունը :

Հ. Ներսէս Ակինեանի այդ նորընծայ Հատորին ձօնի կը, եւ կը համարիմ վաղա՛մեռ որդւոյս խօսուն Արձանը, որ «Ոտուցի կը քալէ աշխարհէ աշխարհ, չի մահիր քարեղէն արձանին, որ անշարժ իւր տեղ մնում է»։ Ինչպէս գրած է ինձ Էջմիածնէն 1906 Նոյեմբեր 6ին, իւր մէկ նամակին մէջ՝ մեծանունն Խրիմեան Հայրիկ, կաթողիկոսն ամենայն Հայոց :

* * *

Սրտի կատարեալ գոհունակութիւն ունիմ, որ վերջապէս յաջողեցայ ի կատար ածել աշխատութիւնս՝ թէեւ ուշ, բայց չէ՞ որ յաճախ կը յեղեղեմք՝ «Լաւ է անագան, քան ո՛չ երբեք» նշանաւոր խօսքը :

Անշուշտ կատարեալ գործ մը չէ այս ալ, գոր հրապարակ կը հանեմ, այլ՝ կը ներկայացնեմ գայն իր նախորդներուն հետ՝ իբրեւ ուղեցոյց ամէն անոնց, որոնք պիտի ուզէին Կ. Պոլսոյ Հայ գաղութին պատմութիւնը ամբողջացնել, անոր դեռ քա՛մուն մնացած կողմերը լուսարանելով :

Իմ խորին եւ անկեղծ շնորհակալութիւններս կը խնդրեմ որ ընդունին այն մեծայարգ Գրիչները, որոնք Կ. Պոլսոյ Հայ Եկեղեցիներուն մէկ քանի հատին՝ Յորեղիակական Դարադարձներու առթիւ շահեկան աշխատութիւններ՝ պատրաստած ժամանակնին, հաճած

1 Ասոնք են՝
1. «Յիշատակարան Հնգեակ Յորեղեանի, Ս. Խաչ Եկեղեցւոյ Սկիւտարու 1676—1926»։ Գրեց՝ Հմայեա Բահանայ Էփէրեան։ Կ. Պոլիս, Տպ. Սեթեան, 1927։
2. «Երեմիայի Գատմ. Ս. Հրեշտակապետ Եկեղեցւոյ Պալաքու 1627—1931»։ Գրեց՝ Մելիք-Սաստուր։ Կ. Պոլիս, Տպ. Կիւրճեմպէրկ, 1931։
3. «Յիշատակարան 75ամեայ Յորեղեանի Ս. Յարութիւն Եկեղեցւոյ Գուրու-Գարուի դրսի 1855—1930»։ Պատրաստեց՝ Յակոբ Վարժապետեան։ Կ. Պոլիս, Տպ. Սեթեան, 1931։

էին քղբատել եւ կարդալ իմ ալ աշխատութիւնը :

Նիւթական եւ բարոյական շա՛տ մեծ գոհողութիւններ պատճառած են ինձ այս Ծանօթագրութիւններու ժողովածոյս, ինչպէս կը վկայեն այս մասին՝ նշանակած բազմաթիւ Յիշատակարաններս, բայց ատոնք եւ լիովին փոխարինուած ու մեծապէս վարձատրուած պիտի նկատեմ, եթէ ուրիշ աշխատասէր-գրասէրներու դոյզն ծառայութիւն մը կարեման մատուցանել :

Շնորհակալութիւններս վիճեցական պատուական Միթթարեան Միաբանութեան եւ այն Հայ թերթերուն ու ազնիւ բարեկամներուն, որոնք հաճեցան քաջալեր ըլլալ ինձ ու Երկրորդ Հատորիս հրատարակութեան առթիւ ուղղել գնահատութեան գիրքեր :

ՏՕԳԹ. ՎԱՀՐԱՄ Յ. ԹՈՐԳՈՍԵԱՆ
Բարիգ :

ԳԼՈՒՆ Է.

ՊԵՅՔՕԶ—ԳԱՆՏԻԼԼԻ—ԳՈՒԶԳՈՒՆՃՈՒԻ

Այս գլուխը՝ ինչպէս զրած եմ նախապէս (Հատոր Բ., էջ 713—714), Վոսթորի Ասիական եգիպտացի նկարագրութիւնն է, զոր Երեմիա մանրամասն կերպով կը ծանօթացնէ իր հիւր վարդապետին. այլ սակայն՝ մի՛ գուցէ ա՛յլ եւս տաղտուկ Անոր պատճառէ, փափկանկատութիւն կ'ունենայ ու կը զրէ՛ հետեւալը՝

Տող 1—2.
«Մի՛ ձանձրացիս ի պատմելս՝
Վարդապետ դու իմ սիրական.
Արդ՝ բու է անցուք յայնկողմն՝
Որ Անատոլու է անուան» :

Կը խնդրէ՛ որ չի ձանձրանայ պատմածներէն ու կը հրաւիրէ զինքը անցնիլ դիմաց՝ Ասիական եգիպտացի, որուն անունը «Անատոլու» է կ'ըսէ :

Այս Գլուխին Յրդէն մինչեւ 35րդ տողե-

4. «Յիշատակարան Հարիւրամեայ Յորեղեանի Խաչիկի Ս. Ստեփանոս Եկեղեցւոյ 1831—1931»։ Գրեց՝ Յակոբ Վարժապետեան։ Կ. Պոլիս, Տպ. Սեթեան, 1931։
5. «Հարիւրամեայ Յորեղեանի Խաչիկի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ 1807—1932»։ Գրեց՝ Մ. Հանէսեան. Կ. Պոլիս, 1932։
6. «Յիշատակարան Հարիւրամեայ Յորեղեանի Ս. Նիկողոս Եկեղեցւոյ Թօփ-Գարուի 1832—1932»։ Կ. Պոլիս 1932։
7. «Պատմական Յիշատակարան Երեւանի Ս. Խաչ Եկեղեցւոյ Գուրու-Չէլէպի, Հարիւրամեայ Յորեղեանի առթիւ 1834—1934»։ Կ. Պոլիս 1934։